## ՎԻՄԱԳՐԱԿԱՆ

# ՔԱՆԱՔԵՌԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԻՄԱԳՐԵՐԸ


### *Մուտք*

*Քանաքեռը, որն այսօր Երեւանի անբաժան մասն է, պատմականօրէն եղել է մշակութային կեդրոն՝ հարուստ հոգեւոր կեանքով, եկեղեցական կառոյցներով եւ վիմագրական ժառանգութեամբ։ Դարեր շարունակ բնակավայրը կրել է հայ մշակոյթի, քրիստոնէական ճարտարապետութեան եւ ժողովրդական հաւատալիքների հետքերը։ Սոյն յօդուածով ներկայացւում է Քանաքեռի Սուրբ Աստուածածին եկեղեցու պատմութիւնն ու վիմագրերը, որոնք մեզ են հասել տարբեր ժամանակաշրջաններից։ Այդ վիմագրերը ոչ միայն փաստագրում են եկեղեցու կառուցապատման եւ վերանորոգման փուլերը, այլեւ վկայում են պատմական անցումային շրջանի մասին։ Տեքստը յենուած է մատենագիտական աղբիւրների, ինչպէս նաեւ դաշտային հետազօտական ուսումնասիրութիւնների վրայ։*

### *Տեղադրութիւնը*

*Քանաքեռը գտնւում է Երեւանի հիւսիսային հատուածում, ծովի մակարդակից 1260-1280 մ բարձրութեան վրայ։ Մինչեւ 1958 թ. այն եղել է Աբովեանի շրջանում, յետագայում դարձել է Երեւանի թաղամաս, ապա, միաւորուելով Զէյթուն համայնքին, դարձել է մայրաքաղաքի տասներկու վարչական շրջաններից մէկը։*

*Քանաքեռի վերաբերեալ առաւել շատ են տեղեկութիւնները 19-րդ դարից սկսած։ Տեղագիր Յովհաննէս Եպիսկոպոս Շահխաթունեանցը նշում է, որ գիւղը բազմամարդ է եղել, որի մասին «ցուցանեն աւերակքն տանց»[1]։ Ըստ նրա Քանաքեռի հիմնադիրն է Քանան թագաւորը կամ իշխանը. ըստ աւանդութեան նա բնակւում էր գիւղի արեւելեան կողմում գտնուող Դարաբաս բլրի վրայ, որի վրայ նախկինում եղել են պալատի սրբատաշ քարերի հետքերը (ներկայիս՝ Երեւանի ջրամբարի տեղում)։ Քանանի քրոջն անուանել են Քանանաքոյր կամ Քանանաքեռ, որից էլ առաջացել է բնակավայրի անուանումը։ Մեծանուն հայագէտ Ղեւոնդ Ալիշանն անուանումը կապում է Նոյի որդի Քամի եւ նրա քրոջ՝ Քեռի հետ, որից էլ առաջացել է Քամաքեռը կամ Քանաքեռը[2]։*

*Քանաքեռը մեծ գիւղ է եղել՝ անուշահամ աղբիւրներով ու մեծաքանակ այգիներով։ 19-րդ դարի առաջին կէսին գիւղում կար 57 տուն[3], իսկ արդէն 60-ական թթ.՝ 150 տուն[4]։ Մ. Սմբատեանցը յիշատակում է, որ 19-րդ դարի 60-ական թթ. գիւղը շրջապատուած է «այգւովք խաղողոյ և պարտիզօք պտղատու և անպտուղ ծառոց»[5]։ Իսկ 80-ական թթ. գիւ-*


---

[1] **Յովհ. Եպս. Շահխաթունեանց**, Ստորագրութիւն Կաթողիկէ էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2014, էջ 312:

[2] **Թ. Խ. Յակոբեան**, **Ստ. Տ. Մելիք-Բախշեան**, **Հ. Խ. Բարսեղեան**, Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հինգ հատորով, հ. 5, Երեւան, 2001, էջ 297:

[3] **Յովհ. Եպս. Շահխաթունեանց**, նշ. աշխ., էջ 312:

[4] **Մ. Սմբատեանց**, Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ գաւառի որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, Վաղարշապատ, 1895, էջ 203:

[5] Նոյն տեղում, էջ 205:

*ղում տեղակայուած էր ռուսական կայազօր[6]։*

### *Քանաքեռը պատմութեան մէջ*

*Որպէս միջնադարեան բնակավայր Քանաքեռը յիշատակւում է Հաղարծինի 1206 թ. նուիրատուական արձանագրութիւնում. «...ԵՍ՝ ԽԱԼԹ, ՈՐԴԻ ՍՄՊԱՏԱՅ, ԻՄ ԳԵՂՆ ՔԱՆԱՔԵՌ ՍԿԱՆԴԱՐԱՆՑ ՀՈՂՆ ԳՆԵՑԻ ԵՒ Ի ՀԱՂԱՐԾԻՆՍ ԷՏՈՒ...»[7]։ Ուշ միջնադարում յիշատակութիւն կայ, որ 1638 թ. Քանան փաշան յարձակւում է Արարատեան դաշտի վրայ՝ հասնելով Կոտայք։ Պտղնի գիւղի մօտ թուրք-պարսկական ճակատամարտ է տեղի ունենում, որտեղ պարսիկները պարտութիւն են կրում, որից յետոյ թուրքական զօրքը բաժանւում է մասերի՝ թալանելով, ամայացնելով Երեւանի շրջակայքը, այդ թւում՝ Քանաքեռ գիւղը, Գառնին, Նորքը[8]։ 1752 թ. Յունիսին, երբ Ազատ խանը 40 000 զօրքով յարձակւում է Երեւանի վրայ, վրաց Հերակլ Բ. թագաւորը շտապում է չէզոքացնել խանի զօրքերին։ Արդիւնքում Քանաքեռից ոչ հեռու Ղըրխ-բուլաղում 1752 թ. Յուլիսի 25-ին վրացիները յաղթանակ են տանում եւ ստիպում են պարսիկներին նահանջել[9]։ 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում 1804 թ. Յունիսին Քանաքեռում Փաւլէ Ցիցիանովն իր զօրքով ընդհարում է ունենում պարսիկների հետ[10]. «...պարսիկներ կը փախչին դէպի Խոր Վիրապ, եւ Ռուսներ բանակատեղը կը գրաւեն, Յուլիս 2-ին Երեւանի քաղաքն ալ կը մտնեն»[11]։ Ռուս-պարսկական 1826-1828 թթ. պատերազմից յետոյ Քանաքեռն անցնում է ռուսական տիրապետութեան տակ։*

### *Եկեղեցիները*

*Քանաքեռը հարուստ է յուշարձաններով՝ նախկինում երկու միջնադարեան գերեզմանատներ՝ խաչքարերով, երկու առաքելադաւան գործող եկեղեցի՝ Ս. Աստուածածին եւ Ս. Յակոբ, ռուսադաւան Ս. Աստուածածին եկեղեցի։ Գերեզմանատներից մէկը Երեւան-Սեւան մայրուղին կառուցելու համար քանդուել է եւ վերացել, գերեզմանաքարերի մի մասն էլ տեղադրուած է Քանաքեռի մահարձանի (Պետեւանի խաչքար) տարածքում։*

*Եկեղեցիների կառուցման վերաբերեալ տեղեկութիւն չկայ։ Մատենագիտական աղբիւրներից յայտնի է, որ երկու ձեռագիր[12] է գրուել Քանաքեռում, որոնցից մէկի ձեռագիր յիշատակարանում նշւում է, որ 1496 թ. եկեղեցիները կանգուն են եղել[13]։ Քանաքեռի եւ ընդհանրապէս Արարատեան դաշտի բնակավայրերն ու յուշարձանները մեծ վնաս են կրել Երեւանի կամ Գառնիի երկրաշարժից։ 1679 թ. Յունիսի 4-ին, Երեքշաբթի օրը, ժամը 7-ին սկսուել է շարժուել Արարատեան երկիրը, որն ընդհատումներով տեւել է մինչեւ հոկտեմբեր[14]. «Ի թուին Ռ և Ճի և Ըի յունիս ամսոյ Դ (1679 թ. Յունիսի 4), աստուածասաստ բարկութիւն եղև ի վերայ երկրին Արարատեան, զի հայեցաւ Աստուած*

---

[6] **Թ. Յակոբեան**, Երեւանի պատմութիւնը, 1879-1917 թթ., Երեւան, 1963, էջ 39:

[7] Դիւան հայ վիմագրութեան, պրակ VI, առձ. 24, Երեւան, 1977, էջ 24:

[8] **Թ. Յակոբեան**, Երեւանի պատմութիւնը, 1500-1800, Երեւան, 1971, էջ 48:

[9] Նոյն տեղում, էջ 108-109:

[10] **Ե. Շահազիզ**, Հին Երեւանը, Երեւան, 2003, էջ 143:

[11] **Մ. Արք. Օրմանեան**, Ազգապատում, Բ հատոր, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 3847:

[12] ՄՄ, ձեռագիր 1550, 1632 թ., Ձեռագիր № 5614, Ժողովածոյ, 1543 թ.:

[13] **Ա. Յարութիւնեան**, Հին Երեւանի եւ ներկայ արուարձանների եկեղեցիներն իբրեւ զբոսաշրջութեան կենտրոններ, Բանբեր Մատենադարանի, հ. 30, Երեւան, 2020, էջ 473:

[14] **Ե. Շահազիզ**, նշ. աշխ., էջ 135:

բարկութեամբ յարարածս յիւ... Եւ ի Քանաքեռ գիւղ ոչ մնաց բուն մի հաւու... ՌՄԻԸ (1228) մարդ մեռաւ»[15]։ Յետագայում Նահապետ Եղեսացի Կաթողիկոսը (1691-1705) «նշանաւոր շինութիւններ կատարեց», «...յերկիրն Երեւանու որքան քարաշէն եկեղեցիք կան, ըստ մեծի մասին ի սմանէ են շինեցեալք»[16], իսկ 1695 թ. «շինեաց զԵրևանու երկու եկեղեցիսն, Քանաքեռու, զԿոնդին, և զայլոց բազմաց գեղօրեից եկեղեցիս խախտեալ քարիւ ի հիմանէ»[17]։ Փաստօրէն, 1695 թ. նորոգուել է Քանաքեռի թէ՛ Ս. Յակոբ, թէ՛ Ս. Աստուածածին եկեղեցիները։

Քանի որ եկեղեցիները ուսումնասիրուել են հինգ տասնամեակ առաջ, հետեւապէս անհրաժեշտութիւն կար որոշ լրացումների։ Սոյն յօդուածով ներկայացնում ենք Քանաքեռի Ս. Աստուածածին եկեղեցու հիմնադրման պատմութիւնն ու վիմական ժառանգութիւնը։

Քանաքեռի հիւսիսային բարձունքում, Ս. Յակոբ եկեղեցուց 200 մետր հեռաւորութեան վրայ գտնւում է Ս. Աստուածածին բազիլիկ եկեղեցին, որտեղ պատարագում էին «միմիայն հինգ նաւակատեաց մեռելոց օրերումն»[18]։ Եկեղեցին սրբատաշ կարմիր եւ սեւ տուֆից է, երկթեք տանիքով, աղօթասրահում երկու զոյգ մոյթերով, ունի աւագ խորան՝ երկու աւանդատներով, երկու մուտք՝ հարաւից եւ արեւմուտքից, «...ի վերայ արևմտյան դրանն լեալ է գաւիթ, այլ անկեալ խոնարհեալ կայ առ տեղեաւն»[19]։ Այն բնորոշ է եղել 17-րդ դարում տարածում ունեցած կամարակապ նախագաւիթներին, ներկայումս չի պահպանուել։ Առանձնայատուկ ուշադրութեան են արժանի արեւմտեան մուտքի շրջաքանդակները, որոնք կատարուել են մեծ վարպետութեամբ։ Ուշագրաւ է նաեւ արտաքուստ արեւելեան խաչաքանդակը. խաչի երկու կողմերում դիմաքանդակներ են, խաչը եզերուած է վեցթեւանի աստղերով, առկայ են երկու աղաւնիներ։ Եւս չորս աղաւնի քանդակուել է եկեղեցու հարաւային պատին լուսամուտների հարեւանութեամբ։ Ընդհանրապէս, զոյգ աղաւնիները կապուած են հոգու անմահութեան, անդրշիրիմեան աշխարհի եւ խաղաղութեան իմաստի հետ[20]։

Զաքարիա Քանաքեռցին յիշատակում է, որ եկեղեցում գործել է միաբանութիւն, եկեղեցական դպրոց, այն ունեցել է պարիսպ, վանական սենեակներ, այլ շինութիւններ, որոնց հետքերը հազիւ նշմարելի են։ 17-րդ դարի վերանորոգման ընթացքում որպէս շինաքար օգտագործուել են երկու հարթ տապանաքար, տասնեակ խաչքարեր (15-17-րդ դդ.), որոնք թուագիր են կամ արձանագիր[21]։ Բարձունքում գտնուող այս կառոյցը երբեմն ծառայել է պաշտպանական ամրոց գիւղի բնակչութեան համար, դրա համար էլ եկեղեցու արեւելեան մասում փորուել է 70 մետրանոց գաղտնուղի (ներկայումս չի պահպանուել), որը բացւում էր բլրի ստորոտում գտնուող առուի վրայ։ Խորհրդային տարիներին եկեղեցին լքուել է եւ դարձել է պահեստ։ Յետագայ տարիներին այն նորոգուել է 1875 թ., իսկ վերջին անգամ՝ 2012-2016 թթ. Քանաքեռի բնակիչ Արտուշ Սիմոնեանի միջոցներով։ Արդիւնքում բարեկարգ եկեղեցին վերաօծուել եւ յանձնուել է ՀՀ Զինուած ուժերի հոգեւոր առաջնորդութեանը։

---

[15] **Զաքարիա Քանաքեռցի**, Պատմութիւն Կոնդակ Սուրբ ուխտին Յոհաննու վանից, Երեւան, 2015, էջ 149:

[16] **Մ. Արք. Օրմանեան**, Ազգապատում, Բ հատոր, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 3087:

[17] **Թ. Յակոբեան**, Երեւանի պատմութիւնը, 1500-1800, Երեւան, 1971, էջ 362:

[18] **Մ. Սմբատեանց**, նշ. աշխ., էջ 205:

[19] **Յովհ. Եպս. Շահխաթունեանց**, նշ. աշխ, էջ 313:

[20] Հայաստանի միջնադարեան կոթողային յուշարձանները, IX-XIII դարերի խաչքարերը, Երեւան, 1984, էջ 32:

[21] **Կ. Ղաֆադարեան**, Երեւան: Միջնադարեան յուշարձանները եւ վիմական արձանագրութիւնները, Երեւան, 1975, էջ 85-86:

***Վիմագրերը***

*Ս. Աստուածածին եկեղեցու վիմագրերը ուսումնասիրութեան են ենթարկուել XIX դարում տեղագիրների՝ Յովհ. Շահխաթունեացի, Մ. Սմբատեանցի, Ղեւոնդ Ալիշանի կողմից։ Անցեալ դարի կէսերին դրանք ուսումնասիրել եւ ի մի է բերել անուանի հնագէտ Կ. Ղաֆադարեանը, ով իր աշխատութեան մէջ յիշատակել է 17 արձանագրութիւն[22]։ Դրանցից միայն մէկն է նախկինում հրատարակուած եղել վերոնշեալ հեղինակների կողմից։ Մեր ուսումնասիրութիւնների ընթացքում եկեղեցու որմերից յաջողուեց գրառել 6 վիմագիր, նախկինում հրատարակուած վիմագրերից երկուսի թուականը, իսկ գերեզմանատան տարածքից ընդօրինակուեց 9 վիմագիր։*

*1. Խաչքար, արեւմտեան մուտքին կից, 2 տող (նկար 1, գրչ. 1).*

ՉՅՈՎԱՆԷՍ ԿԱՉՄ[Ո]Ղ/ ԹՎ ՉԾԲ (1503 թ.)

*Այս արձանագրութիւնն առանց թուականի հրատարակել է Կ. Ղաֆադարեանը[23]։ Մեր կողմից ընթերցուել է թուականը, որը վարդեակի վերնամասում է (նկար 1, գրչ. 1)։*

*2. Խաչքար, հիւսիսային պատին, խաչի վերին թեւի ձախ կողմում, ելնդաւոր գրերով, 1 տող, (նկար 2, գրչ. 2)։*

ՅԱԿՈԲ ՎԱՐԴՊ[Ե]Տ Կ[Ա]Չ[ՄՈՂ]

*Յակոբ կազմողը գործել է աւելի քան երեսուն տարի Գեղարքունիքի Մարտունու եւ Վարդենիսի տարածաշրջաններում ԺՉ դարի կէսերին[24]։*

*3. Խաչքար, վարդեակի ստորին մասում, կիսատ, 1 տող, (նկար 3, գրչ. 3).*

...ԵՒ ՉԱՒԱԿԱՅՍ ՄԷ[Ր]ՕՅ Հ[Ա]ՆՐ[Ա]ՍՊԻՆ

*Յետագայում վերանորոգման արդիւնքում եկեղեցու պատերի մէջ ագուցուել է երկու հարթ տապանաքար, որոնք ունեն կամարաձեւ կտրուածք եւ ընթեռնելի վիմագրեր։*

*4. Հարթ տապանքար՝ ագուցուած հարաւային պատին, 5 տող, (նկար 4, գրչ. 4).*

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ/ ...ԱՆԱՅ ՄԻԲ/.....ԴՍ Կ/.....ՆԻ/ .....Ն

*5. Հարթ տապանաքար՝ ագուցուած արեւմտեան պատին, 3 տող, (նկար 5, գրչ. 5).*

[ԱՅ]Ս Է ՏԱՊԱՆ ԱՄՈՒՍԻՆ/ԿՈՂԱԿԻՑ ԱԿՈԲԻՆ/ ՌՃԺԱ (1662 թ.)

*6. Եկեղեցու արեւելեան պատին, արտաքուստ, որմնախաչի ստորին մասում, 3 տող, (նկար 6, գրչ. 6).*

ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԷ/ԽՕՍ Է ԽՕՃԱՅ Ա/ՂԱՃԱՆԻՆ

*Խօճա Աղաճանը իբրեւ հովանաւոր յիշատակւում է «գեղեցկաշէն եւ բարձրաբերձ» եկեղեցու շինարարական արձանագրութեան մէջ[25]։ Կարելի է ենթադրել, որ Աղաճանը եկեղեցու վերանորոգման աշխատանքների մեկենասն է եղել, որի պատուին փոքրիկ խաչքար են փորագրել։*

---

[22] **Կ. Ղաֆադարեան**, նշ. աշխ., էջ 213-215:

[23] **Կ. Ղաֆադարեան**, նշ. աշխ., արձ. 274, էջ 222:

[24] **Ս. Բարխուդարեան**, Միջնադարեան Հայաստանի ճարտարապետներ եւ քարգործ վարպետներ, Երեւան, 1963, էջ 152-154:

[25] **Կ. Ղաֆադարեան**, նշ. աշխ., էջ 214-215:

*Եկեղեցու շուրջը եղել է ընդարձակ գերեզմանատուն՝ բարձրարժէք ու նրբաճաշակ խաչքարերով, հարթ տապանաքարերով, որոնց մի մասն օգտագործուել է որպէս շինաքար եկեղեցու վերանորոգման ընթացքում։ Ներկայումս գերեզմանատունը պահպանուել է յուշարձանի արեւմտեան մասում եւ հարաւային թեքութեան վրայ։ Այստեղ կան մի քանի տասնեակ հարթ եւ օրօրոցաձեւ տապանաքարեր, որոնցից միայն 9-ն են արձանագիր։ Դրանք ունեն յիշատակագրային բնոյթ, թուագրւում են 19-րդ դարի 80-90-ական թթ.։ Այստեղ է ամփոփուել նաեւ Խ. Աբովեանի «Վէրք Հայաստանի» հերոս Աղասին, ով 1827 թ. Հոկտեմբերին սպանուել է Երեւանի բերդի մատոյցներում։*

*Գերեզմանատանը պահպանուած տապանաքարերի վիմագրերը դեռ ուսումնասիրութեան կարիք ունեն, ուստի հարկ ենք համարում այն ներկայացնել առանձին յօդուածով։*

*Քանաքեռի Սուրբ Աստուածածին եկեղեցին եւ նրա վիմագիր ժառանգութիւնը կազմում են հայ միջնադարեան մշակոյթի ու հոգեւոր կեանքի շերտերից մէկը։ Եկեղեցու որմերին պահպանուած վիմագրերը կարեւոր տեղեկութիւններ են պարունակում ոչ միայն ճարտարապետական վերակառուցումների, այլեւ՝ բնակավայրի սոցիալ, հոգեւոր կառուցուածքի, նուիրատուների, վանական կեանքի, քարգործ վարպետների մասին։ Այս վիմագրերը արժէքաւոր են լեզուաբանական, պատմագիտական, մշակութաբանութեան տեսանկիւնից, քանի որ դրանց միջոցով հնարաւոր է վերականգնել Քանաքեռի մշակութային եւ պատմական անցեալի մի ամբողջ ժամանակաշերտ։*

**Նկարներ եւ գրչագրեր**

Նկար 1

Գրչագիր 1

Նկար 2

Գրչագիր 2

Նկար 3

Նկար 4



Գրչագիր 3

Գրչագիր 4

Նկար 5



Նկար 6



Գրչագիր 5

Գրչագիր 6

**ՍՈՒՍԱՆՆԱ ԱԴԱՄԵԱՆ**

*Պատմ. գիտ. թեկ., ՀՀ ԳԱԱ ՀԱԻ գիտաշխատող*